ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

14 ՄԱՐՏԻ 2025թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Գրիգորյանը, Վանո Հակոբյանը, Լիլիա Հարությունյանը, Հայկ Մարիկյանը, Հմայակ Մարտիրոսյանը, Մարտուն Մարտիրոսյանը, Սյուզաննա Նազարյանը, Արմեն Ջուլհակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Արսեն Հարությունյան, Լուսինե Հովհաննիսյան, Լևոն Քալանթարյան, Արսեն Ավագյան, Էլմիրա Ռևազյան, Գրիգոր Պապյան, Գայանե Ղալաչյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Հրահատ Աբրահամյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը

Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությամբ և ավագանու անդամների համաձայնությամբ օրակարգային հարցերին ավելացվեց ևս 2 հարց:

ԼՍԵՑԻՆ

*ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. Հաստատել համայնքի ավագանու նստաշրջանի ութերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 19-Ա)*

ԼՍԵՑԻՆ

*ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ (ՏԱՊ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 4.1 կետով, 35-րդ հոդվածի 3.1 կետով և 82.1 հոդվածով Ստեփանավան համայանքի ավագանին՝ ***որոշում է***

1. Հաստատել Ստեփանավան համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ)՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 20-Ա)*

ԼՍԵՑԻՆ

*ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, «Հավաքների ազատության մասին» օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1.Հաստատել՝

1) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 21-Լ)*

ԼՍԵՑԻՆ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ*

*ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀՐՇԵՋ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՍԱՐՔԵՐ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՋԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարարական ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության Ստեփանավանի հրշեջ փրկարարական ջոկատին մարզական սարքեր նվիրաբերել մարզական սարքեր՝

•Հեծանիվ

•Ծանր աթլետիկայի և մկանների մարզման սարք

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 22-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԱՐԹՈՒՐ ՂԱՐԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԹՎՈՎ 9 ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՋԵԿ. ԳԱՅԱՆԵ ՂԱԼԱՉՅԱՆ)*

Երաժշտական և արվեստի դպրոցներին ազգային, փողային և լարային նվագարանների գծով 2025 թվականի ուսուցման համար 2025 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցները (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով) ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2060-Ն որոշման հավելված 5-ի աղյուսակ 9-ով սահմանված դպրոցների համամասնություններին համապատասխան՝ Ստեփանավանի «Ա. Ղարիբյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ին 14 սովորողի համար հատկացվել է տարեկան 3050,4 ՀՀ դրամ: Արվեստի դպրոցում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցանվում են 23 սան: 9 սաների ուսման

վարձը փոխհատուցելու համար անհրաժեշտ է 1458,0 ՀՀ դրամ (մեկ սանի համար 18000 ՀՀ դրամ) 2025 թվականի ուսումնական տարին ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

1. Թույլատրել չվճարելու 9 սովորող սաների հաշվով 1458,0 (մեկ սանի համար 18000 ՀՀ դրամ) ՀՀ դրամի չափով վարձավճար մինչև 2025 թվականի ուսումնական տարվա ավարտը (կցվում է պայմանագիրը):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 23-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՁԵԿ. ԼԵՎՈՆ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 689-րդ հոդվածով, հաշվի առնելով Ստեփանավան համայնքի ղեկավարի առաջարկությունը Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է*

Բնական գազի անխափան մատակարարման, գազահամակարգերի սպասարման և անվտանգ շահագործման նպատակով՝ տալ համաձայնություն գույքի անհատույց օգտագործման իրավունքով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելու ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր բնակավայրերում 2024 թվականին սուբվենցիոն ծրագրով կառուցված և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ներքոհիշյալ վկայականներում նշված գույքը (գազահամակարգը)՝

| h/h | Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական | Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման |
|---|---|---|

| | գրանցման վկայականի համարը | վկայականի տրման ամսաթիվը |
|---|---|---|
| 1 | 10032025-06-0051 | 10.03.2025 |
| 2 | 10032025-06-0037 | 10.03.2025 |
| 3 | 11032025-06-0026 | 11.03.2025 |
| 4 | 14032025-06- | 14.03.2025 |

- Թույլատրել Ստեփանավան համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ հետ կնքել վերոհիշյալ վկայականներում նշված անշարժ գույքերի անհատույց օգտագործման պայմանագրեր՝ իրականացնելով նաև դրանց առնչվող անհրաժեշտ փաստաթղթերի ստորագրման, դրանցից բխող գործողությունների (այդ թվում՝ նոտարական վավերացման) կազմակերպման և պատշաճ իրականացման գործընթացը:

- Սույն որոշմամբ թույլատրել վերոնշյալ անշարժ գույքերն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել (գույքի անհատույց օգտագործման պայմանագրերը կնքել) 10 (տաս) տարի ժամկետով՝ յուրաքանչյուր պայմանագրում սահմանելով, որ եթե կողմերից որևէ մեկը պայմանագրի ժամկետի գործողության ավարտից 1 (մեկ) ամիս առաջ չի ծանուցում մյուս կողմին պայմանագիրը լուծելու կամ նոր պայմանագիր կնքելու մասին, ապա պայմանագիրը համարվում է երկարաձգված անորոշ ժամկետով:

- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 24-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

*ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է***

1. Ստեփանավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երրորդ նիստի գումարման օր սահմանել 11.04.2025թ. ժամը 14.30 ին:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 25-Ա)*

Ավագանու անդամներ

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՎԱՐՍԻԿ ԱՍՐՅԱՆ

ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՏՈՄ ԳԱԳԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆ

ԱՆՈՒՇ ԻՍՊԻՐՅԱՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՂՈՒՆԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՊԱՊՅԱՆ

ԼԵՎՈՆ ՊԱՊՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏՈՆՈՅԱՆ

*Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ*

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ _____

*Նիստն արձանագրեց՝* Հասմիկ Մովսիսյանը

_____